Ք. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ
ՋԱՀԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1954

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ИСТОРИИ

№ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 5

К. Г. ГРИГОРЯН

ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА ДЖААН КАРАХАНЯН

Биографический очерк

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	5

355·331(47.925)(092 ադուն ա՝ դան)
Գ-39

Ք. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՏԱՑՎԱԾ Է 1961 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ
ՋԱՀԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Կենսագրական ակնարկ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Եմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

A Ա/11833.

Սովետական Միության հերոս Ջահան Կարախանյան

Մեր սոցիալիստական Հայրենիքի վրա ուխտադրուժ հարձակում գործած գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովուրդների մղած Հայրենական Մեծ պատերազմի կրակի ու բոցերի մեջ ծնվեցին ու կոփվեցին բազմաթիվ հերոսներ, որոնց անունները ոսկե տառերով գրվեցին այդ անօրինակ հերոսամարտերի տարեգրության մեջ։ Ֆաշիստական ագրեսորների դեմ մղված պատերազմի տարիներին սովետական ժողովուրդը կրկին պաշտպանեց իր Հայրենիքը և նրա զավակներից շատ հերոսներ իրենց կյանքը նվիրաբերեցին մեծ հաղթանակին, գրանցելով սովետական վառ հայրենասիրության ոգեշունչ օրինակներ։

Մեր մեծ Հայրենիքում Սովետական իշխանություն հաստատվելու հետ առաջ եկավ նոր հայրենասիրություն՝ սովետական հայրենասիրություն։ Սովետական հայրենասիրությունը՝ անսահման սերն է սոցիալիստական Հայրենիքի հանդեպ, ուր ոչնչացված են շահագործումը, ազգային ճնշումը, ուր իշխանությունը պատկանում է աշխատավոր ժողովրդին։ Այն դուրս է գալիս ազգային սահմաններից, համակված լինելով ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարներով՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով. նրա ոգեշնչողը և դաստիարակը Կոմունիստական մեծ պարտիան է՝ սովետական ժողովրդին ուղղություն տվող ուժը։

Հայրենական Մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, Սովետական Միության եղբայրական ժողովուրդների զավակների շարքերում, մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները։ Նրանք տոգորված ռուս մեծ ժողովրդի քաջարի զավակների անմահ սխրագործություններով բազմապատկեցին Սովետական Բանակի փառքը, հարստացրին հայ ժողովրդի մարտական տրադիցիաները։

Քաջերից-քաջերի՝ Սովետական Միության հերոսներ Մատ-
ռոսովի, Գաստելլոյի, Կոժեդուբի, Պոկրիշկինի, Կոսմոդեմյան-
սկայայի, Կոշևոյի և մյուսների փառապսանծ պլեադայի մեջ
մտան հայ ժողովրդի անմահ զավակներ Նելսոն Ստեփանյանը,
Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և ուրիշներ։

Անմար փառքով պսակված հերոսներից է նաև կար-
միրբանակային, սակրավոր Զահան Սարգսի Կարախանյանը,
որը Հայրենական Մեծ պատերազմում ցուցաբերեց արիություն
և ընկավ հերոսի մահով։

Զահան Կարախանյանի անձնուրաց խիզախությունը ռազ-
մաճակատում սովետական վառ հայրենասիրության լավագույն
օրինակներից մեկն է։

* * *

Զահան Կարախանյանը ծնվել է 1918 թվականի մայիսի
2-ին, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում, աշխատավոր գյու-
ղացու ընտանիքում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով նոր
ու երջանիկ կյանքի ուղի բացվեց հայ ժողովրդի, այդ թվում
նաև Կարախանյանի ծնողների համար։ Կոլտնտեսության մեջ
նրանք ավելի աշխատանքով բարեկեցիկ ու երջանիկ կյան-
քի պայմաններ ստեղծեցին իրենց ընտանիքի ու էներխաների
համար։

1927—34 թթ. Զահանը սովորել է Կողբի 7-ամյա դպրո-
ցում։ Այնուհետև նա իր ուսումը շարունակել է Ալավերդու շըր-
ջանի Շնող գյուղի միջնակարգ դպրոցում, այն ավարտելով գե-
րազանց գնահատականներով։

Զահանը աչքի էր ընկնում իր աշխատասիրությամբ, ըն-
կերասիրությամբ և օրինակելի վարքով։ Դպրոցում նա հակում
ուներ դեպի ընդլիտական և հասարակական առարկաները և
մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում էր ֆիզիկան, քիմիան,
հանրահաշիվը և պատմությունը։ Սիրելով գրականությունը, նա
իր ազատ ժամանակի մեծ մասը տրամադրում էր ընթերցանու-
թյանը։ Հափշտակված կարդում էր ռուս. և հայ նշանավոր գրող-

ների գործերը։ Իր ընկերներից շատերի հետ նա ևս հիանում էր Օստրովսկու «Ինչպես է կոփվում պողպատը» վեպի կոմերիական հերոսներով։

Դեռ շատ փոքր հասակից, Զահանը սիրում էր լսել պատմվածքներ հերոս ռազմիկների և զորավարների մասին։ Արդեն պատմության դասերից նա ծանոթ էր ռուս զորավար Սուվորովի ու քաղաքացիական կռիվների շատ հերոսների քաջագործություններին։ Բազմաթիվ անգամ դիտել էր «Չապաև» կինոնկարը և ընկերական դրույցների ժամանակ նա հաճախ ասում էր.

—Տղերք, այ, արժե քաջ լինել Չապաևի նման։

1936 թվականին Զահանի կյանքում տեղի ունեցավ մեծ փոփոխություն՝ կատարվեց նրա վաղուցվա փափագած իղձը՝ Զահանը ընդունվեց լենինյան կոմերիմիության շարքերը և դարձավ Կողբ գյուղի կոմերիտական կազմակերպության ակտիվ աշխատողներից մեկը։ Դաստիարակվելով լենինյան կոմերիմիության շարքերում, Զահանը կազմակերպության բոլոր հանձնարարությունները կատարում էր ճշտությամբ։ Նա լավագույն պիոներ ջոկատավարներից մեկն էր դպրոցում։

Ազատ ժամերին, մանավանդ ամառային արձակուրդներին, կոմերիտական Զահանը մասնակցում էր իրենց գյուղի Զախարիձեի անվան կոլտնտեսության բերքահավաքի աշխատանքներին, մասնակից դարձնելով նաև իր ջոկատի պիոներներին։ Նա սիրում էր զբաղվել սպորտով։ Սպորտը, գյուղատնտեսական աշխատանքները, հայրենի լեռների ծաղկափառ ու զով բնությունը Զահանին կոփեցին ու դարձրին գյուղի առողջակամ երիտասարդներից մեկը, որը լի էր Հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ։

1937 թվականին մասնակցելով հրաձգային մրցումներին, իր դիպուկ նշանառությամբ գրավում է առաջին տեղը և արժանանում «Վորոշիլովյան հրաձիգի» կոչման, պարգևատրվում «ԵՊԱՊ»-ի և «Վորոշիլովյան հրաձիգի» կրծքանշաններով։

1938 թվականին Զահանը կանչվում է Սովետական Բանակ՝ հերթական զինվորական ծառայության։ Սովետական Բանակի շարքերում նա ձեռք է բերում հաստատակամություն, ցուցաբերում բարձր կարգապահություն, զինվում

ռազմական ու քաղաքական դիտակետերով։ Բանակում նա խոսացնում և հարատևացնում է նաև ռուսաց լեզվի իր իմացությունը։

1939—40 թվականներին Ջահանը մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը և սպիտակ ֆիններին դեմ մղված մարտերին։

Սպիտակ ֆիններին դեմ մղված մարտերում, գտնվելով առանձին մոտոռազմված գումարտակում, Ջահանը, իր դինակից ռուս կադրային մարտիկների հետ, հաղթահարելով հյուսիսի դաժան սառնամանիքները, արիաբար մարտնչում էր թշնամու դեմ։

Ջահանը Սովետական Հայաստանի համար մղած մարտերում 1940 թ. մարտին դիմում է Կոմունիստական պարտիայի շարքերն ընդունվելու համար, որպես պարտիայի անդամության թեկնածու։ Այդ բարձր վստահությանն արժանանալուց հետո, նա, կրկնապատկված եռանդով մասնակցում է Մաններհայմի գծի խիստ ամրացված երկու գոտիների և երեք դիրքերի ոչնչացմանն ու գրավմանը։

Սովետա-ֆիննական պատերազմի ավարտումից հետո, 1940 թվականի վերջում Ջահանը զորացրվում, վերադառնում է Հայաստան և աշխատանքի անցնում Երևանի գործարաններից մեկում։

* * *

1941 թվականի հունիսի 22-ին, ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա։ Ընդհատվեց սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործ աշխատանքը։ Սովետական Միության դինված ուժերը, ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, Պաշտպանության Պետական Կոմիտեի ու նրա նախագահ Ի. Վ. Ստալինի առաջին իսկ կոչով ոտքի կանգնեցին պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիքի պատիվը, ազատությունն ու անկախությունը։

Սկսվեց Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը։ Հայ ժողովուրդը Սովետական Միության եղբայրական ժողովուրդների շարքում գրավեց իր մարտական տեղը։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից Ջահան-

Կարախանյանը մեծ ցանկություն ուներ ռազմաճակատ մեկնելու։ Բայց քանի որ նա թիկունքում կատարում էր կարևոր պաշտպանական աշխատանք, այդ պատճառով նրան ռազմաճակատ մեկնելը սկզբում չի հաջողվում. սակայն նա չի հաշտվում այդ մտքի հետ։ Ռազմաճակատ մեկնելու ուզությամբ շարունակելով իր դիմումները, նա մատնորդվում է նաև պարտիայի անդամ դառնալու հարցով։

1941 թ. լրանում է պարտիայի անդամության թեկնածու Զահան Կարախանյանի թեկնածուական ժամկետը։ Նույն թվականին, սեպտեմբերի 26-ին գիմում է գործարանի պահպանական բաժանմունքի պարտիական սկզբնական կազմակերպության՝ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի անդամության թեկնածությունից պարտիայի անդամ անցնելու համար։

Զահանն իր գիմումում գրում է.

«...Ցանկանում եմ մարտական այս օրերին մարտի դնալ միայն որպես կոմունիստ։

Խոստանում եմ բոլոր առաջադրանքները կատարել այնպես, ինչպես պահանջվում է ամեն մի պարտիականից։

Խնդրում եմ գիմումս չմերժել։

Գիմող՝ Զ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ»[1]։

Սկզբնական պարտիական կազմակերպությունը, նկատի ունենալով թեկնածուական ժամանակաշրջանում Կարախանյանի բարեխիղճ, նվիրված աշխատանքը և Հայրենական պատերազմի սկսվելուց հետո նրա ակտիվ մասնակցությունը աշխատաշրջանային ու հակաօդային պաշտպանական աշխատանքներին, նրան միաձայն ընդունում է պարտիայի անդամ։

Զահանն է՛լ ավելի է լցվում Հայրենիքին անձնուրաց ծառայելու վեհ ցանկությամբ և 1941 թվականի դեկտեմբերին նրա ցանկությունը իրականանում է։ Շատ շատերի հետ բանակ է մեկնում նաև կոմունիստ Զահանը։ Հենց այդ ժամանակ ինչպես եղբայրական մյուս ռեսպուբլիկաներում, նույնպես և Հայաստանում կազմակերպվում են ազգային-զորային միավորումներ։ Այդ միավորումներից էր հայկական N հրաձգային դիվիզիան,

[1] ՄԵԼՍԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, կապոց 14, անձնական գործ 4, թերթ 4։

որի շարքերն առաջին համալրողներից մեկն էր հայ ժողովրդի արժանավոր զավակ Զահան Կարախանյանը, որը նշանակվում է դիվիզիայի սակրավոր դումարտակում ջոկի հրամանատար և ապա ընտրվում վաշտի պարակազմակերպիչ։

Ավելի քան կես տարի նա թիկունքում մարզում էր իր մարտիկներին և պատրաստվում մեկնելու ռազմաճակատ։ Թիկունքում եղած ժամանակ սակրավորները կատուցում էին վարժական կամուրջներ, կազմակերպում էին փորձնական գետանցումներ, ուսումնասիրում էին սակրային գործի բարդ տեխնիկան։ Սակրավորի դժվարին և պատասխանատու մասնագիտությունը պահանջում էր խիստ զգուշություն և ճարպկություն։ Ինչպես հայտնի է, ականները լինում են տարբեր ուժի, ձևի և մեծության, որոնք թաղվում են խճուղիների, անտառապատ անցուղիների, ինչպես նաև բնակավայրերին մոտ գտնվող ճանապարհների վրա, շենքերում և այլ տեղերում։ Սակրավորը պետք է համբերատարությամբ շրջափի կասկածելի տեղերը, իր ականորսիչով հայտնաբերի ականը և ապա անջատի կապուղը գետանատորից, անվտանգ դարձնի ականը։ Իզուր չէր Զահանը ընտրել սակրավորի այդ դժվարին և պատասխանատու մասնագիտությունը։ Նա արդեն քաջ տիրապետում էր իր մասնագիտությանը և հատուկ վարպետությամբ շատ ականներ էր չեզոքացրել։ Այդ նույնը նա սովորեցնում էր իր մարտիկներին և նրանց համար անձնական օրինակ հանդիսանում։

Մեկ անգամ, դիվիզիայի մասշտաբով, կազմակերպված էր տակտիկական պարապմունք։ Սակրային դումարտակին, որտեղ ջոկի հրամանատար էր Զահանը, առաջադրանք էր տրված արագահոս Հրազդան գետի վրայով կազմակերպել ամբողջ դիվիզիայի գետանցը։ Դումարտակի բոլոր մարտիկները, որոնց թվում և Զահանը հրամանատարության առաջադրանքը կատարում են լավ գնահատականով։ Ամեն մի տակտիկական պարապմունքից հետո Զահանը անում էր համապատասխան եզրակացություն և պատրաստվում էր նոր առաջադրանքներ կատարելու։

Վերև հիշված գետանցի հաջորդ օրը սակրային դումարտակի համար կազմակերպվում է գետանցման երկրորդ փորձը՝ դումարտակում առաջին անգամ կիրառվող լարային մեթոդով։

Գետանցումը կատարվում էր հետևյալ ձևով. գետի մեկ ափից

մյուսն անց էին կացված երկու զուգահեռ լարեր, որոնց վրայով անցնում էին շարժական մետաղյա օղակներ։ Գետանցող մարտիկը պետք է բռներ այդ օղակներից և, դիմադրելով ջրի հոսանքին, անցներ մյուս ափը։

Անհրաժեշտ էր փորձով մարտիկներին համոզել և ցույց տալ գետանցի այդ մեթոդի հուսալիությունը։ Ինչպես նախորդ տակտիկական պարապմունքներին, այնպես էլ այս անգամ Ջահանը իր ցանկությամբ առաջինն է նետվում ջուրը և մեծ ճարպկությամբ անցնում գետի մյուս ափը՝ արժանանալով բոլորի գովասանքին։ Նա իր անձնական օրինակով ոգևորում է իր ջոկի մարտիկներին, որոնք իսկույն հետևում են նրան։ Այսպիսով, գետանցման այս նոր մեթոդի քննությունը բռնում է գերազանց։

Մինչ նրանք այսպես մարզվում էին թիկունքում, ռազմաճակատի բոլոր հատվածներում մղեցնում էին պատերազմական գործողությունները։ Սովետական Բանակը պաշտպանական ակտիվ մարտերում ջախջախում ու արյունաքամ էր անում թշնամուն, որը մեծ կորուստների գնով աշխատում էր թափանցել մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան։

Մոսկվան գրավելու պլանները ձախողվելուց հետո հիտլերականները 1942 թվականի ամռանը իրենց ուժերը կենտրոնացրին հարավ-արևելյան ուղղությամբ, ստեղծեցին ուժերի մեծ գերակշռություն և, ժամանակավոր հաջողություն ձեռք բերելով, սպառնալիքի տակ դրեցին Ստալինգրադը, Սև ծովի ափերը, Կովկասը։

Թշնամին շարժվեց դեպի հարավ՝ նպատակ ունենալով գրավել ՍՍՌՄ նավթային կենտրոնները՝ Գրոզնին, Բաքուն և հարավային շրջանները կարել կենտրոնից։

Ահեղ ճակատամարտեր ծավալվեցին Ստալինգրադի տափաստաններում, հյուսիսային Կովկասի ընդարձակ դաշտերում ու Կովկասյան նախալեռներում։

Ստալինգրադի վիթխարի ճակատամարտի հետ միասին սկսվեցին համառ և արյունահեղ մարտեր նաև Կովկասի համար։ Մահացու վտանգ կախվեց Կովկասի ժողովուրդների ազատության և անկախության վրա։

Ուստ մեծ ժողովրդի խիզախ զավակների հետ մի սիրտ,

մի հոգի դարձած կովկասյան ժողովուրդները Սովետական Բանակի միավորումների հետ միասին ստիպեցին կանգնեցին Կովկասի հերոսական պաշտպանության համար։ Ռազմաճակատ մեկնելու հրաման ստացավ նաև հայկական N դիվիզիան։ Մեկնելուց առաջ, 1942 թվականի հուլիսի 16-ին Երևանում Լենինի հրապարակում տեղի ունեցավ դիվիզիայի զորամասերի պատմական զորահանդեսը՝ դիվիզիային մարտական դրոշ հանձնելու համար։ Ընդունելով մարտական դրոշը, հայ մարտիկները երդվեցին հավատարիմ մնալ Հայրենիքին, Կոմունիստական պարտիային, Սովետական կառավարությանը և անձնվիրաբար մարտընչել հանուն մեր սրբազան երկրի ազատության և անկախության։

1942 թվականի օգոստոսի սկզբին հայկական դիվիզիան մեկնեց ռազմաճակատ։

Դիվիզիան կանգ առավ Դրոզնու մոտ գտնվող Սունժա գետի ափին և պատրաստվում էր մտնել մարտի մեջ։ Հրամանատարության կողմից առաջադրանք ստացվեց Սունժա գետի վրա կառուցել մի մեծ փայտյա կամուրջ, որի երկարությունն էր լինելու 70 մետր, իսկ լայնությունը՝ 6—7 մետր։

Կամուրջն ունենալու էր ռազմական կարևոր նշանակություն՝ թիկունքը կապելու էր ռազմաճակատի հետ։ Կամուրջի կառուցումը տևեց 5—6 օր։ Համառ ու լարված աշխատանքի պայմաններում սակրավոր գումարտակը ավարտեց կամուրջի կառուցումը, որի համար դիվիզիայի հրամանատարության կողմից արժանացավ շնորհակալության։ Կամուրջի կառուցման աշխատանքների մեջ առանձնապես աչքի ընկավ Ջահանն իր ջոկով, որի մասին նշվեց միավորման հրամաններում։

Հայկական հրաձգային դիվիզիան, իր հարևան զորամասերի հետ պաշտպանության ընդգիծ բռնեց Կովկասյան նախալեռներում, Թերեք գետի ափին, մարտական խնդիր ունենալով թույլ չտալ թշնամուն ոչ մի քայլ առաջ շարժվել ճեղքելու պաշտպանության գիծը։ Անդրկովկասյան ռազմաճակատի միավորումներն ակտիվ պաշտպանական մարտերով կանգնեցրին ֆաշիստական դազանին, դամեցին նրան Կովկասյան նախալեռներին և ջախջախիչ հարվածներ հասցրին։

Ռազմաճակատի այս հատվածում թշնամուն առաջին ջախ-

Ջախիչ հարվածը տրվեց 1942 թվականի նոյեմբերին Վլադիկավկազի (այժմ Ջաուջիկաու) շրջանում։

Կովկասյան ռազմաճակատի ռազմիկներին ոգեշնչում էին այդ ժամանակ Ստալինգրադի տակ տեղի ունեցող վիթխարի ճակատամարտում հակահարձակման անցած սովետական զորքերի փայլուն հաղթանակները։ Ստալինգրադյան ճակատամարտը արմատական բեկման սկիզբ դրեց երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում։

Ստալինգրադը հանդիսացավ գերմանա-ֆաշիստական բանակի մայրամուտը։ Ստալինգրադյան ջարդից հետո հակառակորդը չկարողացավ այլևս ուշքի գալ։ Սովետական Բանակը, հարձակման անցնելով Լենինգրադից մինչև Կովկաս ընկած լայն ռազմաճակատում, սկսեց օկուպանտների մասսայական վոնդումը մեր երկրից։

Ստալինգրադի մոտ սովետական զորքերի տարած հաղթանակով ոգևորված, Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը 1943 թվականի հունվարին, անցնելով հարձակման, սկսեցին դուրս վոնդել օկուպանտներին Կովկասից։

Գործող բանակի միավորումների թվում, հունվարի մեկին հարձակման անցավ նաև հայկական հրաձգային դիվիզիան։ Չնայած թշնամին դրավել էր իշխող բարձունքները, բայց և այնպես դիվիզիայի անձնակազմը Սովետական Բանակի մյուս զորամասերի հետ միասին, հաղթահարելով բոլոր դժվարությունները, կատաղի մարտերում քայլ առ քայլ առաջ էր շարժվում, թշնամուն դուրս մղում ամրություններից։ Սովետական Բանակի առաջխաղացումը դանդաղեցնելու նպատակով գերմանացիները ականապատել էին իրենց պաշտպանության առաջավոր գիծը և դեպի Մալգորեկ քաղաքը տանող բոլոր ուղիները։ Մալգորեկի համար մղված մարտերում արտակարգ ծանր ու պատասխանատու առաջադրանք էին կատարում սակրավորները։ Ջոկի հրամանատար Կարախանյանը իր մարտական ընկերների հետ արիաբար քանդում էր թշնամու կողմից պատրաստված արգելափակոցները, կտրատում փակոցային փշալարերը, անվտանգ դարձնում հակառակորդի կողմից թաղված ականները, կառուցում կամուրջներ, ճանապարհներ և անցուղի բացում հետևակայինների համար։

Ջահանը, հավատարիմ զինվորական երդմանը և իր Հայրենիքին, հենց մարտերի սկզբից ցուցաբերեց հմտություն և անձնական խիզախություն, որի համար էլ, կարճ ժամանակամիջոցում, նա ձեռք բերեց օրինակելի ու կարգապահ ռազմիկի համբավ և արժանացավ բոլորի սիրուն ու համակրանքին։ Մարտերի լարված մոմենտներին անգամ Ջահանը չէր մոռանում զինվորական ու պարտական իր պարտականությունները։ Նա ոչ միայն անվանի սակրավոր էր, այլև աչքի ընկնող ագիտատոր։ Արյունահեղ մարտերի պայմաններում նա, իր սակրավորի անմիջական պարտականությունների կատարման հետ միաժամանակ, տանում էր նաև ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք։ Զրույցներ էր կազմակերպում իր մարտիկների հետ Ստալինգրադյան մարտերի հերոսների սխրագործությունների մասին։ Նրա մարտիկները, ոգեշնչված Ստալինգրադի պատմական հաղթանակներով և իրենց հրամանատարի անձնական օրինակով, դիմումներ էին տալիս Կոմունիստական պարտիայի շարքերն ընդունվելու համար, որպեսզի հետագա մարտերում մասնակցեն որպես Կոմունիստական մեծ պարտիայի անդամներ։

Խնդիր ունենալով ազատագրել Մոզդոկի քաղաքը, թշնամուն դուրս մղել Կովկասյան նախալեռների այդ կարևոր ստրատեգիական հենակետից, մեր զորքերը սկսեցին հետ շպրտել հակառակորդին իր ամրություններից, հունվարի 3-ին ազատագրեցին Մոզդոկի քաղաքը և ընդհուպ մոտեցան Թերեք գետին։

Այսպես սակրավոր գումարտակի մի վաշտ երկու օր մնում է նույն տեղում, որովհետև հնարավոր չէր ոչ առաջ շարժվել և ոչ հետ վերադառնալ։ Առջևում արագահոս գետն էր, որի վրա չկար անցման և ոչ մի ուղի։ Թշնամին նահանջելուց առաջ ոչնչացրել էր դրանք, իսկ ետևում դեպի դիվիզիայի բնագիծը դրնալը չափազանց վտանգավոր էր, քանի որ հակառակորդը անընդհատ կրակի տակ էր պահում այդ բնագիծը։ Զգացվում էր խմելու ջրի խիստ պակաս։ Ցնցած ձմեռ էր, բայց այն ժայռոտ հողակտորը, որի վրա դիրքավորվել էր վաշտը, ամբողջովին մաքրվել էր ձյունից թեժ մարտերի և ուժեղ քամիների հոսանքների հետևանքով։ Խմելու ջրի պահանջը ավելի էր ուժեղանում։ Վաշտի հրամանատար լեյտենանտ Սարգսյանը

դիմում է մարտիկներին, թե ով է հանձն առնում ջուր հասցնել ատորաբաժանմանը։ Վասանդի ենթարկելով իր կյանքը Զահանը, վերցնելով մի քանի հատ կատելոկներ, թշնամու խաչաձև դնդակոծության տակ սողեսող հասնում է գետին և հաջողությամբ ետ դառնում։

Այս փոքրիկ, բայց ընորոշ դեպքը ցույց է տալիս Զահանի անձնուրացությունը և ջերմ սերը զեղի ընկերները։

Մայդարեկից դուրս շպրտված թշնամուն հետապնդելու և նոր ընագծերում նրա ամրանալը արգելելու համար անհրաժեշտ էր սրընթաց դրոնով անցնել լեռնային արագանոս Թերեք գետը։ Բայց թշնամին ոչնչացրել էր անցման ուղիները։

Հայկական դիվիզիայի մարտական գործողությունների հատվածում, հրամանատարության առաջադրանքով, սակրավոր գումարտակը Թերեք գետի վրա սկսում է կամուրջ կառուցել։ Արհամարհելով հունվարյան սառնամանիքը, թշնամու անընդհատ կրակի տակ սակրավորները հերթափոխությամբ աշխատեցին ամբողջ գիշերը։ Կարախանյանը և իր մարտիկները լավ էին հասկանում առաջադրանքի լրջությունը և ջանում էին այն տվարտել ճիշտ ժամանակին։ Աշխատանքի ընթացքում Զահանի ընկերները մի քանի անգամ ափ դուրս եկան փոքր ինչ տաքանալու, բայց ամեն անգամ նորից ջուրն էին մտնում տեսնելով, թե ինչպես իրենց ընկերը՝ Զահանը մի բոպե անգամ չի մտածում հանգստի մասին։ Եվ նորից նոր թափով ու ոգևորությամբ եռում էր աշխատանքը։ Լարված աշխատանքի մեջ սակրավորները չզգացին ինչպես անցավ գիշերը։ Օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, խիզախ սակրավորները ճիշտ ժամանակին պատրաստում են կամուրջը, անցման պատրաստի մյուս միջոցները, որով հնարավորություն են տալիս իրենց զորամասին հաջող կերպով անցնելու գետը։

Այդ մարտերի ընթացքում Զահանը հաճախ սիրալիր և ոգեշնչող նամակներ էր ուղարկում իր հարազատներին։ Ամեն նամակում նշում էր, որ տուն է վերադառնալու միայն հաղթանակով։

Կարճ ժամանակամիջոցում Կովկասյան նախալեռները ևս մաքրվեցին գերմանա-ֆաշիստական զավթիչներից։ Թշնամին,

թողնելով իր բնագծերը, Կուբանի վրայով դեպի Ռոստով էր նահանջում՝ ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ։ Հայկական հրաձգային դիվիզիան, մյուս զորամասերի հետ միասին, հետապնդում և ջարդում էր նահանջող թշնամուն, ազատագրելով Հյուսիսային Կովկասի շատ գյուղեր ու քաղաքներ։ Դիվիզիան առանց կանգ առնելու մարտերով անցավ ավելի քան 600 կիլոմետր հաղթական ուղի՝ Թերեքի հարավային ափերից, Կովկասի կուրորտային քաղաքներին, Ստավրոպոլի մարզի լայնարձակ տափաստանների միջով դեպի Կուբան և հասավ մինչև Ազովի ափերը։

Անհրաժեշտ էր պաշտպանել Ազովյան ծովի հյուսիս-արևելյան ափը։ Գումարտակների պաշտպանության հատվածը սկրտվում էր Ազով քաղաքից և հասնում մինչև Եյսկ քաղաքից հարավ ընկած Կամիշե-Վատսկայա ծովափնյա բնակավայրը։ Սակրտվոր գումարտակին առաջադրանք էր տրված ականապատել Ազով ծովի արևելյան ափը՝ Եյսկի ամբողջ շրջանը։

Այդ ժամանակ հայ ժողովուրդը դիմեց ռազմաճակատ իր զավակներին հայրենասիրական կոչով։ Նա իր պատմական այդ կոչ-նամակում գրում էր.

«...Հայ մարտիկներ.

Ատեցեք թշնամուն ձեր հոգու ամբողջ ուժով, թող այդ ատելությունը ձեր կրծքերը դարձնի պողպատակուռ զրահ, ձեր բազուկներին տա անսպառ կարողություն։ Թող նոր ուժով վերակենդանանա ձեր մեջ մեր քաջ նախնիների խիզախությունը...»[1]։

Ամրապնդեցեք ռազմաճակատներում անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը,—ասված է այնուհետև նամակում,—հիշեցեք, որ այդ եղբայրության, ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության մեջ է մեր հզոր Հայրենիքի՝ Սովետական Միության անպարտելիությունը։

Հայկական զորային բոլոր միավորումներում, այդ թվում նաև N հրաձգային դիվիզիայի ստորաբաժանումներում կայացան միտինգներ, որտեղ քննության առան հայ ժողովրդի

---

[1] «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին», Հայպետհրատ, Երևան, 1943, էջ 12—13։

Նամակը։ Այդ նամակը ոգևորող տպավորություն գործեց բոլորի վրա, նրա ամեն մի բառը թափանցեց հայ ռազմիկների սրտերն ու հոգին։ Նրանց մեջ նոր ուժով բորբոքվեց անշեջ սերը դեպի Հայրենիքը և անհուն ատելությունը դեպի անարդ թշնամին։

Սակրավոր գումարտակում կայացած միտինգում ելույթ ունեցողներից Զահան Կարախանյանն ասաց.

«...Մեր միակ ճանապարհը դեպի Բեռլին է. մենք ճանապարհ չունենք դեպի Հայաստան, քանի դեռ մեր սովետական հողում կլինի մեկ ֆաշիստ։ Մենք պետք է կատարենք մեր հայ ժողովրդի պատգամը, մեր նշանաբանն է՝ միայն առաջ, դեպի արևմուտք։ Համոզված եղեք, սիրելիներս, որ ձեր ցուցումը մեզ համար օրենք է, չվերադառնալ տուն, հայրենի օջախը, մինչև վերջին հիտլերականը չընաջնջվի, մինչև Սովետական մեծ Հայրենիքի ամեն մի թիզ հողը չաղտոտվի գերմանա-ֆաշիստական ճիվաղներից»[1]։

Հայ ժողովրդի կրակոտ կոչը հայ մարտիկների շրջանակներից տարածվեց հեռու, այն մեծ հետաքրքրությամբ կարդացին ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի, ուզբեկ և մյուս ազգերի մարտիկները. այդ կոչը նրանց ևս խորապես հուզեց և ոգեշնչեց նորանոր սխրագործություններին։ Զահանի մտքից չէր հեռանում հայ ժողովրդին տրված խոստումը. նա անվերջ կրկնում էր. «Չենք վերադառնա տուն, մինչև չոչնչացնենք թշնամուն»։

Հայրենիքին անհունորեն նվիրված Զահանը սրբությամբ կատարեց իր խոստումը։

Շուտով հայ մարտիկները և հայկական զորային միավորումները բոլոր ռազմաճակատներից ուղերձներ-նամակներ գրեցին թիկունք, ի պատասխան հայ ժողովրդի նամակին։ Այդ ուղերձներից մեկում, հանրագումարի բերելով ռազմաճակատում իրենց մարտական գործերը, հայ ռազմիկները գրեցին հետևյալը.

«Մեր թանկագին հարազատներ.

Մենք երդվում ենք մեր պատվով, մեր զոհված ընկերնե-

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆոնդ 93, հուշեր Կարախանյանի մասին, էջ 3։

րի արյամբ, բարբարոս ֆաշիստների կողմից անարգված ու խոշտանգված մայրերի, քույրերի, մանուկների արցունքով ու արյամբ, որ վրիժառու կլինենք դահիճ հիտլերականների նկատմամբ...

...Մենք կվերադառնանք, մեր երդումը կատարելով, հաղթանակն ապահովելուց հետո...

...Հաղթանակը մերն է, ֆաշիզմն անխուսափելիորեն կկործանվի։ Մահ գերմանական զավթիչներին»[1]։

Այս պատմական վաստակի տակ, բազմաթիվ անվանի ռազմիկների թվում ստորագրել էր նաև Ջահան Կարախանյանը։

1943 թվականի օգոստոսի վերջին հայկական N դիվիզիան ռազմաճակատում հրամանատարությունից առաջադրանք է ստանում Ազովի ափերից շարժվել դեպի Նովորոսիյսկ և նրանից հյուսիս-արևելք ընկնող անտառապատ լեռների շրջանում բանել պաշտպանական դիրքեր։

Գումարտակներին մարտական խնդիր էր առաջադրված՝ մղել ակտիվ պաշտպանական մարտեր, հատկապես Գոլգայա լեռան և Սախարնայա գոլովկա բարձունքի ուղղությամբ, հետախուզության միջոցով հայտնաբերել թշնամու ուժերն ու կրակակետերի դասավորությունը, նրա մարտությունների սիստեմը և նրանց ոչնչացնել հրետանա-ականանետային կրակով։ Դրա հետ մեկտեղ՝ պատրաստ լինել ընդհանուր հարձակման համար՝ հիշյալ բարձունքների ուղղությամբ։

Գոլգայա լեռը և Սախարնայա գոլովկա բարձունքը համարվում էին Նովորոսիյսկ քաղաքը ֆաշիստական օկուպանտներից ազատագրելու համար մղվող մարտերի բանալին, որովհետև անտառապատ սեպաձև բարձունքները ունեին տեղանքի վրա իշխող դիրք։ Թշնամին այդ բարձունքներում պատրաստել էր խոր էշալոնացված պաշտպանական ընդգիծ։ Պաշտպանության այդ «կապույտ գիծը» անառիկ դարձնելու համար հակառակորդը նրա բնական դիրքին ավելացրել էր խորը փորված տրանշեյներ, ականապատված դաշտեր՝ պաշտպանված փշալարերի խիտ ցանցապատ շղթայով։

Սակրավոր գումարտակին առաջադրված էր Գոլգայա լեռան 500,7 և 512 ու Սախարնայա գոլովկա բարձունքները ականազերծել և ճանապարհ բացել գրամասերի հարձակման համար։

[1] «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին», Հայպետհրատ, Երևան, 1944, էջ 24, 25, 26։

Թեժ մարտեր են սկսվում Դոլգայա և Սախարնայա գոլովկա լեռների բարձունքներում, որոնք բոլոր առ բոլոր մեծ թափով ծավալվում և կատաղի բնույթ էին ստանում։

Մի փոքր հետո սովետական հրետանին, իր կրակը փոխադրելով թշնամու թիկունքը, հնարավորություն է տալիս սակրավորներին ազատ կերպով գործելու։

Թշնամու տեղատարափ կրակի տակ, ռազմաճակատում արդեն վաղուց անուն հանած Կարախանյանի ջոկատը ականաղերծում էր դաշտը և ճանապարհ բացում հետևակի համար։ Սակրավորների այն խումբը, որը կատարում էր մարտական այս առաջադրանքը, մարտնչում էր արիաբար։ Մարտիկների սրտերում բորբոքվում էր հայրենասիրական զգացմունքը՝ ատելությունը զեպի թշնամին, որի առաջխաղացման ճանապարհը փակելու համար սովետական ռազմիկները չէին խնայում իրենց արյունը, կյանքը։ Երեք տեղից վիրավոր մարտիկ Վաղարշակ Մանյանը մարտադաշտից դուրս չեկավ՝ այնքան ժամանակ, մինչև չկատարեց մարտական խնդիրը։ Ավագ լեյտենանտ Ներսիսյանը, արհամարհելով մահը, նռնակները ձեռքին մտնում է թշնամու դզոտը, ոչնչացնում հիտլերականներին և այդտեղ հերոսի մահով զոհվում է նաև ինքը, անմոռանալի հիշատակ թողնելով իր ընկերների սրտերում։

Դոլգայա լեռան՝ թշնամու «անառիկ» ամրությունների գրավման ժամանակ իրեն հավիտենական փառքով պսակեց հայ ժողովրդի անմահ զավակ, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը, որը կրկնեց Մատրոսովի գյուցազնական անձնազոհությունը և ապահովեց դասակի կողմից մարտական խնդրի կատարումը։ Նրա հերոսությունը ոգեշունչ օրինակ էր միավորման բոլոր մարտիկների համար։

Մոլեգնող մարտերի պրոցեսում, Ջահանի ջոկը նոր առաջադրանք ստացավ՝ ոչնչացնել Սախարնայա գոլովկայի վրա տեղավորված այն դզոտը, որը խանգարում էր հետևակի առաջշարժմանը։

Արագ կերպով կողմնորոշվելով, Կարախանյանը ցեմենտի գործարանի մոտից, ճանապարհ բաց անելով, ճարպկությամբ շրջապատում է դզոտը և մարտիկ Շիրին Եսայանի հետ միասին ձեռքի նռնակներով ոչնչացնում այն և առաջ շարժվող հետևակի

համար ականապատված բարձունքի վրա անցք բաց անում։ Դրանից հետո հետևակը հնարավորություն է ստանում ոչնչացնել Սախարնայա գոլովկայի վրա գտնվող թշնամու ուժերը և գրավել բարձունքը։

Սեպտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը մեր զորամասերն, անցնելով հարձակման, մարտեր էին վարում Նովորոսիյսկ քաղաքի համար։ Հրամանատարության կողմից ծրագրված էր դեսանտային խմբերով, ծովի կողմից, գիշերով աննկատելի մոտենալ Նավահանգստին և այնտեղից թափանցել քաղաքի ներսը։

Հայկական դիվիզիայի սակրավոր գումարտակից մի վաշտ գնում է հարևան N դեսանտային դիվիզիային օգնելու՝ Նովորոսիյսկի օպերացիան կատարելու համար։ Սակրային ստորաբաժանման մեջ էր նաև Ջահան Կարախանյանի ջոկը։

Գիշերվա կեսին տրվում է հրաման՝ մարտական նավերը շարժել դեպի Նովորոսիյսկ։ Վաշտը նավակով շտապում էր իջնել նավահանգիստ և, ականազերծ անելով այն, ապահովել մեր զորամասերի անվտանգ մուտքը քաղաք, ապա ականազատել ծովափը, կտրատել փշալարերը, որպեսզի հնարավորություն ստեղծվեր դեսանտային ստորաբաժանումներին ծովափ դուրս գալու։ Այդ միջոցին հանկարծ ծովի մութ ջրերը լուսավորվում են թշնամու լուսարձակներով՝ հրանոթները նետում են լուսատու արկեր։ Դեսանտային նավերը ավելի արագացնում են իրենց ընթացքը։ Հիտլերականները սկսում են հրետանային, ականանետային և գնդացրային խաչաձև ուժեղ կրակ։ Նավերը ընդհուպ մոտենում են ծովափին, տրվում է իջնելու մարտական հրաման։

«Հանուն Հայրենիքի» բացագանչությամբ առաջինը ջուրն է նետվում Ջահանն իր մարտիկներով։ Նրա օրինակին հետևելով, մյուս սակրավորները մինչև գոտկատեղը հասնող ջրի միջով սկսում են ականներից ազատել ծովափը։

Թշնամին անընդհատ շարունակում էր հրետանային և գնդացրային կրակը, բայց նա չկարողացավ խանգարել սակրավորներին։ Սակրավորները մաքառում էին ծովի ալիքների հետ, սուզվում ջրի մեջ, բարձրանում, նորից սուզվում և կատարում իրենց առաջադրանքը։

Նրանք, շոշափելով տեղանքը, ական-ականի ետևից հայտնաբերում էին և, անվնաս դարձնելով այն, շարժվում առաջ։

Զահանը մարտերի լարված այդ մոմենտին անգամ մատնոված էր իր մարտիկների կյանքով։ Նա հաճախ դիմում էր նրանց հարցնելով՝ արդյոք կան զոհվածներ կամ վիրավորներ և անընդհատ հիշեցնում էր, որ զգույշ լինեն։

Շուտով Զահանն իր խմբով հասնում է ակամապատված դաշտի երկրորդ շերտին, որը ավելի դժվար էր ակամապատել, քան նախորդ շերտը։ Երկրորդ շերտի մասին մինչ այդ ջոկը տեղեկություն չուներ։ Զահանն իր ուշիմությամբ, հայտնաբերելով այն, կանխեց զորամասին սպառնացող վտանգը։

Թշնամին նույն կատաղությամբ կրակ էր թափում այդ տարածության վրա։ Չնայած ուժեղ կրակին, Զահանը իր ընկերներով քայլ առ քայլ ապատում էր ծովափը ականներից և շարժվում առաջ։ Մոտենալով ափին, Զահանը առաջինն է ոտք դնում ցամաքի վրա և «ուռա» բացականչությամբ իր հետևից տանում ջոկին։

Սակրավորների հետևից քաղաք թափանցած դեսանտային ստորաբաժանումները սկսում են փողոցային արյունահեղ մարտեր։ Նրանց առաջից տնից-տուն, փողոցից-փողոց անցնելով-սակրավորները, ճանապարհ են մաքրում դեսանտային խմբի համար։ Փողոցներից մեկում թշնամին ամրացել էր սննդամթերքի պահեստի շենքում և այդտեղից հատուցավոր գնդացրով տեղատարափ կրակ էր թափում առաջ շարժվող դեսանտայինների վրա։ Անհրաժեշտ էր շտապ լռեցնել այդ կրակակետը։ Սակրավորները ճարպիկ մանևրով իրենց գցում են շենքի նկուղը. շենքը հիտլերականների կողմից ականապատված էր պայթեցման համար։ Հանկարծ Զահանը նկատում է բիկֆորդյան ծխացող լարերը։ Այդ միջոցին հիտլերականները դիմում են փախուստի։ Պետք էր փրկել շենքը և ոչնչացնել փախչող թշնամուն։ Նա արագությամբ գոտուց արձակում է նռնակները, հանձնում ընկերներին և վերջիններիս կարգադրում նկուղի լուսամուտներից նռնակներ նետել փախչող թշնամու հետևից, իսկ ինքը նետվում է դեպի ծխացող լարերը և միմյանց հետևից կտրատում նրանք։

Փրկված էր մարտիկների կյանքը և սննդամթերքի պահեստը։

Ականապատված վայրով, հարձակվող դեսանտայինների առաջին խումբը շարժվում էր քաղաքի վրա։

Դեսանտայինները գրոհում են ծովափնյա մի կիսաքանդված շենքի վրա, որտեղից գնդացրային անընդմեջ կրակով հիտլերականները խանգարում էին դեսանտայինների առաջխաղացմանը, իսկ նրանց մի տանկը գրոհում էր ուղիղ դեսանտայինների խմբի վրա։ Սովետական խիզախ զրահարարները տեղն ու տեղը հրկիզում են տանկը և ոչնչացնում ամբողջ անձնակազմը։

Մարտերը մոտենում են շենքին։ Սակրավորների խումբը Կարախանյանի գլխավորությամբ, այստեղ նույնպես հասնում է դեսանտայիններին օգնության։ Սակրավորները պաշարում են շենքը, ֆաշիստները շարունակում են կրակ տեղալ շենքը պաշարող սովետական մարտիկների վրա։

Ջահանը, այդտեղ էլ վտանգի ենթարկելով իր կյանքը, ուժեղ կրակի տակ մաքրում է շենքի մատույցներում գրված ականները և թափանցում շենքի առաջին հարկը։ Սակայն թշնամին համառորեն շարունակում է կրակը շենքի մյուս հարկերից։ Այս անգամ արդեն սակրավորները պայթեցնում են թշնամու կողմից պաշտպանության հենակետ դարձած շենքը, որի ավերակների տակ իրենց գերեզմանն են գտնում գերմանական զավթիչները։

Այսպիսով, լիկվիդացիայի է ենթարկվում զորամասի առաջխաղացմանը խանգարող այս խոչընդոտը։

Նորանոր դեսանտային խմբեր էին մոտենում նավահանգստին և խորանում քաղաքի ներսը։ Դեսանտայիններին հաջողվում է գրավել Նովորոսիյսկ քաղաքի առաջին թաղամասը և հարձակումը շարունակել մյուս թաղամասերի վրա։

Հինգօրյա համառ, կատաղի մարտերից հետո 1943 թվականի սեպտեմբերի 16-ին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը, Սևծովյան նավատորմի ռազմանավերի և զորամասերի փոխգործողությամբ գրավում են ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող սևծովյան նավահանգիստներից մեկը՝ Նովորոսիյսկ քաղաքը։

Քաղաքի հյուսիսային մասում, որտեղով անցնելու էին թշնամուն հետապնդող մեր հետևակը, մոտորացված զորամասերը և տանկերը, կար երկաթյա մի մեծ կամուրջ, որի վրայով անցնում էր երկաթուղին ու խճուղին։

Զահանն իր ընկերներով հասավ կամուրջին և զարմացած կանգ առավ։ —Ինչու կամուրջը չեն պայթեցրել,—դարձավ նա ընկերներին։ Մարտիկներից Սերգեյ Հարությունյանը շտապ վրա բերեց։ —Էստեղ մի խոշոր կա։ Նրանք առաջ վազեցին։ Զահանը հանկարծ նկատեց կամուրջի խուցի սարին մասում լարերի խիտ ցանցը։ Թշնամին լարերով պատել էր կամուրջը և խնամքով նախապատրաստել կամուրջի պայթեցումը։ Թշնամին, որ հենց նոր էր թողել կամուրջը, նրա տակի ձորակով վեր էր բարձրանում և թփերի ետևից կրակում ավտոմատներով։ Մեր զորքերը հետապնդում էին նրանց։ Զահանը առաջ շարժվեց, հայացքով գննեց սև լարերի ցանցը և իմացավ, թե ուր են տանում նրանք, որն է դրանց սկիզբն ու վերջը։ Սակրավորները թույլ չտվեցին մեր հետևակայիններին մոտենալու կամուրջին։ Այդ միջոցին, ռելսերի և խճուղու տակ դրված փուղասները նկատելով, Զահանը ձայն է տալիս ընկերներին.

—Ահա փուղասները։

Մեկ ակնթարթում նա պատկերացրեց այն սոսկալի ազդը, որ կարող էր առաջանալ կամուրջի պայթումից։ Նա շարունակում էր գննել կամուրջի առաստաղը, երբ մարտիկ Աշոտ Ռամազյանը բացագանչեց՝ «լարը վառվում է»։ Այդ լսելով, Զահանը իսկույն շուռ եկավ և նկատեց այրվող բիկֆորդյան լարի ծայրը, որի մյուս ծայրը միացած էր ականի պայթուցիչին։ Աչքով չափեց վառվող լարը և մտածեց. «Մինչև կապսուլները մոտ 15 սանտիմետր կա, մեկ քառորդ բոպե դեռ կվառվի։ Նա հասկանում էր, թե ինչ է նշանակում դա։ Պետք էր շտապել։ Խիզախ սակրավորը կայծակի արագությամբ գրպանից հանեց մկրատը, բարձրացավ Աշոտի ուսերի վրա, կտրեց ընկավ կամուրջի ռելսերից և կտրեց այրվող լարի ծայրը։

Նահանջող թշնամին, տեսնելով, որ կամուրջը չի պայթում, իր անզորությունից կատաղած, սկսում է հրետանային ռմբակոծության ենթարկել կամուրջը։ Կամուրջը դեռևս փրկված չէր բավական էր արկերից մեկը դիպչեր կամուրջի որևէ ականի և կամուրջը հիմնահատակ կլիներ։ Զահանը, Աշոտը և Սերգեյը, քրտինքի մեջ կորած, սկսում են կամուրջը ականազատել։ Զահանը արագորեն դուրս է գալիս կամուրջի տակից, գտնում է մեկ գերան, բերում, հենում է պատին և ընկերներին պատվի-

բում պինդ պահել, իսկ ինքը ճարպիությամբ մագլցում է դեպի վեր, արագորեն կտրատում է լարերը և կապուլները ցած նետում։ Ֆուգասների հանելը տևում է մի քանի ժամ։

Այսպիսով, նա անվնաս է դարձնում ավելի քան 500 կիլոգրամ պայթուցիկ նյութ՝ հանում է քսան ական։

Կամուրջը փրկված էր։

Դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթը «Համարձակություն և խիզախություն» խորագիրը կրող հոդվածում այդ մասին գրում է.

«...Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող մարտերում աչքի ընկավ սակրավոր Կարախանյանը, որը իր մարտական սխրագործություններով ուղի բացեց հետևակի համար առաջ շարժվելուց[1]։ Իսկ Անդրկովկասյան ռազմաճակատի հայկական «Մարտիկ» թերթը նշեց. «Խիզախ սակրավոր Ջահան Կարախանյանը, որն էր կյանքը վտանգի ենթարկելով, ականազերծ է արել երկաթուղային կամուրջը և անվնաս դարձրել 500 կիլոգրամ պայթուցիկ նյութ, ներկայացված է կառավարական բարձր պարգևի»[2]։

Քաղաքից նահանջող հիտլերականներին հետապնդելիս, Կարախանյանը Գայդուկում և Վոլչի-Վորոտայում ականներից մաքրում է երեք կամուրջ (մոտ 196 ական) և ճանապարհ բացում առաջ շարժվող զորամասերի համար։ Դեպի Բայլեսկայա տանող ճանապարհին Ջահանն իր ընկերներով ականազատում է ևս երեք կամուրջ և փրկում հարյուրավոր մարտիկների կյանք։

Նովորոսիյսկ քաղաքի համար մղվող մարտերում նա անվնաս դարձրեց 350 ական. հետագայում նա աչքի ընկավ նորանոր քաջագործություններով։ Այս, իրար հաջորդող սխրագործությունները կատարելու համար դիվիզիայի հրամանատարությունը կարմիրբանակային, փաշտի պարտադրակիրպիչ Ջահան Սարգսի Կարախանյանին ներկայացնում է կառավարական բարձր պարգևի՝ Սովետական Միության Հերոսի կոչման։

Այս առիթով սակրային գումարտակի հրամանատարի քաղ. դծով տեղակալ մայոր Գևորգյանը, իր մոտ կանչելով միավորման անձնակազմի կողմից սիրված խիզախ սակրավոր Կարա-

[1] «Կարմիր զինվոր», 30 սեպտեմբերի, 1943, № 91։

[2] «Մարտիկ», 16 նոյեմբերի, 1943, № 84։

խանյանին, հետաքրքրվում է կամուրջի փրկման մանրամասնություններով։

—Ջահան ջան, —սիրալիր դիմեց նա հերոսին, —մի մոտեկ, ու ավելի մանրամասնորեն պատմիր, թե ինչպես կամուրջը փրկեցիր պայթումից։

Ջահանը մի պահ շփոթեց, մի քանի անգամ թարթեց սևեռուն աչքերը, ապա համեստորեն, հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

—Ընկեր մայոր, ինչ արել ենք, ընկերների հետ ենք արել, ես մենակ հո չեմ արել։

—Այդ ես գիտեմ, Ջահան, դու ասա քո մասին։

—Իմ մասին... դժվարանալով կրկնեց Ջահանը, գլուխը հանգիստ կախ դրեց և ընկավ մտածմունքի մեջ։

Հրամանատարի համար պարզ եղավ, որ Ջահանը չէր ուզում մարտական այդ կարևոր առաջադրանքի կատարումը վերագրել միայն իրեն, որի համար և նա ներկայացվել էր Սովետական Միության Հերոսի պատվավոր կոչմանը։ Ջահանը դեռ մտորումների մեջ էր, երբ հրամանատարը վեր կացավ տեղից, ընկերաբար խփելով նրա ուսին ասաց.—Լավ, Ջահան, տեսնում եմ, որ չես ուզում պատմել, դնա, մեկ ուրիշ անգամ, ավելի հանգիստ ժամանակ մանրամասն կպատմես, թե քո և թե ընկերներիդ խիզախության մասին։

Ջահանը թեթևացած խորը շունչ քաշեց, կարծես մի ծանր բեռ ընկավ նրա ուսերից, թույլատվություն խնդրելով հեռացավ։

Հակառակորդի պաշտպանության «կապույտ գիծը» ճեղքելուց և Նովորոսիյսկն ազատագրելուց հետո սովետական զորամասերը, հետապնդելով թշնամուն, սկսեցին մարտեր մղել Վերխնայա Բականսկայա շրջանային կենտրոնի համար։ Բնակավայրին տիրելու համար, նախ անհրաժեշտ էր հակառակորդին դուրս քշել իր պաշտպանության նոր ընագծից, որն ուներ տակտիկական խոշոր նշանակություն։ Թշնամին պաշտպանության ընագիծ էր բռնել Բականսկայայի հյուսիս-արևելյան բարձունքում։ Նրան պաշտպանության գծից դուրս վռնդելու համար այստեղ նույնպես առաջին հերթին անհրաժեշտ էր սակրավորների դդուշ

և համառ աշխատանք, քանի որ թշնամին ականապատել էր ամբողջ Վերին Բականիկյան։

Սակրավոր գումարտակի ամբողջ խնդիր դրվեց՝ կարճ ժամանակամիջոցում ամբողջովին ականազերծել տեղանքը։ Այս պատասխանատու մարտական առաջադրանքի կատարման նախաձեռնությունը ստանձնում է Կարախանյանը իր ջոկով. նա անձամբ անվնաս է դարձնում մոտ 50 ական։

Այդ բոլորի հետ միասին նա բարեխղճորեն կատարում էր նաև պարտիզանական պատվավոր պարտականությունները. մարտական գործողությունների ընթացքում, բլինդաժներում, առաջավոր գծում մարտիկներին ծանոթացնում էր օրվա թերթերին ու նորություններին, հաղորդում ռազմաճակատի ու թիկունքի հաջողությունների մասին և ռազմիկների մեջ միշտ վառ պահում հայրենասիրական ոգին։

1943 թվականի սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի վերջերը Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը համառ մարտեր էին մղում Թամանն թերակղզին հիտլերյան օկուպանտներից ազատագրելու համար։ Թամանի համար մղված մարտերի վճռական հարձակման օրը՝ հոկտեմբերի 4-ին վաշտի հրամանատար Զաքարյանը առաջադրանք է տալիս Կարախանյանին գիշերը հետախուզել այն ուղին, որով առաջ էր շարժվելու մեր հետեւակը։

—Կա, ընկեր վաշտի հրամանատար, գիշերը հետախուզել հետեւակի անցման ուղին։

Հրամանատարական կետից հեռանալուց հետո նա մտածում էր գիշերվա դժվարին խնդրի հաջող կատարման մասին։ Գիշերը դասավորելով ջոկը ու բացատրելով նրանց առաջադրանքի նշանակությունը, յուրաքանչյուր մարտիկին տալիս է կոնկրետ առաջադրանք, իսկ ինքը, վերցնելով իր հետ մարտիկներից մեկին, մութ գիշերով անցնում է խնդրի կատարմանը։ Թշնամին ուժեղ կրակի տակ էր պահում այն հատվածը, որի ուղղությամբ գործում էր քաջերի այդ ջոկատը։ Պայքարելով մահվան դեմ և հաղթահարելով մութ ու անծանոթ տեղանքի դժվարությունները, քայլ առ քայլ առաջ էին գնում սակրավորները։ Թշնամու խաչաձև կրակի տակ նրանք մոտենում են հակառակորդի փշալարերի խիտ ցանցին։ Շատ շուտով նրանք իրենց ձեռքի մկրատ-

Ներով, մեծ վարպետությամբ, կտրատում են լարերը, անցուղի բացում, որը հնարավորություն է տալիս հետևակին անարգել առաջ շարժվելու։

Մոտակայքում գտնվող գերմանական գնդացրային մի կրակակետ շեշտակի կրակ է բացում Ջահանի վրա։ Սեղմվելով գետնին, Ջահանը իր հերթին սկսում է կրակել գնդացրային անձնակազմի վրա։ Մարտը հերկարում է։ Կարախանյանի մոտ եղած փամփուշտները վերջանում են, բայց թշնամու գնդացիրը դեռևս չի դադարում կրակելուց։ Ջահանը որոշում է սողալով մոտենալ կրակակետին և ձեռքի նռնակներով ոչնչացնել թշնամու գնդացրային անձնակազմը։ Սողալով դեպի առաջ, կրակակետին դեռ չհասած, Ջահանը ճանապարհին գտնում է թշնամու մեկ հրացան և մի քանի տուփ փամփուշտ։ Հենց թշնամու այդ զենքով էլ ընդմիշտ լռեցնում է հակառակորդի կրակակետը։ Թշնամու գնդացրային անձնակազմը մարտի դաշտում թողնում է երկու սպանված, իսկ մնացածները՝ գիմում են փախուստի։

Ռազմաճակատում անուն հանած սակրավորն այս անգամ էլ զորամաս է վերադառնում առաջադրանքը գերազանց կատարած։ Նա իր ջոկատով հետևակի համար բաց էր արել անցման ուղի, որի համար նրանք արժանացան հրամանատարության և բոլոր մարտիկների գովասանքին։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը, ցամաքից հասցված հարվածներով և ծովից գեսանտներ իջեցնելով, բազմաթիվ մարտերի հետևանքով ավարտեցին թշնամու Թամանյան խմբավորման ջախջախումը և հոկտեմբերի 9-ին ամբողջովին մաքրեցին Թաման թերակղզին գերմանական զավթիչներից։

Այսպիսով, լիկվիդացվեց գերմանացիների կարևոր պլացդարմը Կուբանում, որն ապահովում էր նրանց համար Ղրիմի պաշտպանությունը և գեպի Կովկաս հարձակողական գործողություններ կատարելու հնարավորությունը։

Ավարտվեցին մարտական գործողությունները Թամանում։ Գերմանական զավթիչների դեմ Թամանի համար մղված մարտերում առանձնապես աչքի ընկած եղբայրական ժողովուրդների մյուս միավորումների թվում N հայկական հրաձգային դիվիզիան նույնպես արժանացավ Գերագույն Գլխավոր հրամանա-

տար Ի. Վ. Ստալինի շնորհակալությանը, նրան շնորհվեց Թամանյան պատվավոր կոչում։

Հիացած հայ ռազմիկների սխրագործություններով Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի հրամանատարը շնորհակալական հեռագիր ուղարկեց Հայաստանի աշխատավորությանը և ՀԿՊ Կենտկոմին.

«Հոկտեմբերի 9-ի առավոտյան ժամը 4-ից 30 րոպե անց կոտրվեց Թշնամու վերջին դիմադրությունը Թամանի թերակղզում։ Թշնամու ցիրուցան դորամասերը, կտրված լինելով ջրային անցուղիներից, սեղմվեցին ծովին և ֆիզիկապես ոչնչացվեցին, գրավվեց ռազմական ավար և վերցվեցին գերիներ։ Կովկասի համար անցյալ տարի աշնանը Թերեքի, Տուապսեի մոտ, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքներում սկսած ճակատամարտի վերջին էտապն ավարտվեց։ Թշնամու ջախջախված զորամասերը, պարտություն կրելով, խայտառակ կերպով փախան Ղրիմ։ Մարտերում աչքի ընկավ գնդապետ Սաֆարյանի N հայկական դիվիզիան։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի մարտիկները՝ սերժանտները և սպաները մարտական ողջույն են հղում Հայաստանի աշխատավորներին։

Կեցցեն Կովկասի ժողովուրդները։

Կեցցե հաղթական Կարմիր Բանակը»[1]։

Ի պատասխան Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի հրամանատարի հեռագրի, Հայաստանի աշխատավորները հղեցին իրենց ջերմագին ողջույնները և շնորհավորանքները Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատարներին, սպաներին, սերժանտներին և մարտիկներին Կովկասի համար մղված պատմական ճակատամարտը փայլուն կերպով ավարտելու և գերմանա-ֆաշիստական դավաճիչների Թամանյան խմբավորումն ամբողջովին ջախջախելու կապակցությամբ։ Ասա խնդրում էին հաղորդել իրենց շնորհավորանքները գնդապետ Սաֆարյանին, հայկական հրաձգային դիվիզիայի սպաներին, սերժանտական կազմին և բոլոր մարտիկներին, որոնք պատվով կատարեցին

[1] «Սովետական Հայաստան», 10 հոկտեմբերի, 1943, № 208։

ժողովրդի պատգամը՝ հիտլերյան դավաճանների դեմ մղվող անողոք պայքարում։

Հայկական դիվիզիային, հայ մարտիկներին կառավարության կողմից տրված բարձր գնահատականը Հայաստանի աշխատավորներին ոգեշնչում է աշխատանքային նորանոր սխրագործություններին։ Սովետական Հայաստանի աշխատավորները գումարված միտինգներում հպարտությամբ էին խոսում Հայկական դիվիզիայի մարտական հաջողությունների մասին խոստանում էլ ավելի ուժեղացնել ռազմաճակատին և Սովետական Բանակին ցույց տրվող օգնությունը։

Հայկական դիվիզիային թամանյան կոչում շնորհելու կապակցությամբ հոկտեմբերի կեսերին ՀԿՊ Կենտկոմի և ՀՍՍՌ Կառավարության հանձնարարությամբ ռազմաճակատ են ուղարկում մի խումբ գրողներ և ժուռնալիստներ, որոնք ստորագրամանուսմներում պատմում են Հայաստանի աշխատավորների թիկունքում ձեռք բերած հաջողությունների մասին։

Հոկտեմբերի վերջին զորամասի հրամանատարությունը Հայրենիք, Սովետական Հայաստան ուղարկեց իր անդրանիկ պատգամավորներին. այդ թվում մայոր Գեորգ Կարապետյանին (դիվիզիայի ղեկավար), կարմիրբանակային Ջահան Կարախանյանին, մայոր Սիմոն Նալբանդյանին, բանաստեղծ ավագ լեյտենանտ Արշալույս Սարոյանին, գրող լեյտենանտ Քրիստափոր Թափալչյանին և մի շարք մարտիկների ու սպաների։ Չնայած Ջահանը գնդացիրի ամենաերիտասարդ անդամն էր, բայց նա գտնվում էր բոլորի ուշադրության կենտրոնում։

Նախքան Հայաստան հասնելը, դիվիզիայի գնդացիրները Թբիլիսիում հանդիպում ունեցավ Անդրկովկասյան ռազմաճակատի կարմիրբանակային „Боец РККА“ թերթի խմբագրության աշխատակիցների հետ։ Հանդիպմանը ներկա էին Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչները։ Այդ հանդիպման ժամանակ սակրավոր Կարախանյանն իր ելույթում ասաց. «Կատարելով հրամանատարության բոլոր առաջադրանքները, մենք գիշեր ու ցերեկ անդադար կհետապնդենք նահանջող թշնամուն։ Ես պարտավորվում եմ ավելի կատարելագործվել իմ ռազմական մասնագիտության մեջ, որպեսզի կա-

բոզանամ անվնաս դարձնել թշնամու կողմից գործադրվող ամեն մի ականն[1]։

Այնուհետև դելեգացիան ուղևորվեց դեպի Երևան։ Թբիլիսիից Երևան գալիս յուրաքանչյուր կայարանում դելեգացիային ծաղկեփնջերով դիմավորելու էին գալիս բանվորների, կոլտնտեսականների և ինտելիգենցիայի բազմաթիվ ներկայացուցիչներ։ Վերջիններս իրենց ջերմ սերն ու երախտագիտությունն էին հայտնում Հայրենիքի պաշտպաններին։

Ճանապարհորդությունն անցավ բավական հետաքրքիր։ Դելեգատները ճանապարհին միմյանց հետ շատ մտերմացան։ Նրանք զրուցում էին, կատակներ անում և մեկ-մեկ էլ խոսքը ուղղում Ջահանին, ասելով, Ջահան, հերիք է ինչքան լսեցիր, մի բան պատմիր քո մարտական սխրագործություններից, ասենք թեկուզ կամուրջի մասին։ Ջահանը ժպտերես պատասխանում էր.—Ի՞նչ պատմեմ, ինչ որ պիտի պատմեմ բոլորդ էլ լսել եք, դա սովորական մի պատմություն է, որ պատահում է բոլոր սակրավորների հետ, դրանում արտասովոր ոչինչ չկա։

Բայց քանի որ դելեգացիայի բոլոր անդամները դեռևս ռազմաճակատում լսել էին, թե ինչպես նա, վտանգի ենթարկելով իր կյանքը, ականազերծել էր կամուրջը, որով հնարավորություն էր տվել իրենց միավորմանը հետապնդելու նահանջող հակառակորդին և միաժամանակ փրկել էր հարյուրավոր զինվորների կյանքը անխուսափելի մահից, ահա հենց դրա համար էլ ամբողջ ճանապարհորդության ընթացքում դելեգատների ամբողջ ուշադրության կենտրոնումն էր այդ լակոնիկ երիտասարդը, որն իր համեստությամբ զարդարում էր իրեն և վայելում դելեգացիայի սերն ու հարգանքը։

1943 թվականի նոյեմբերի 9-ին, ցերեկը Երևանի կայարանն էին եկել Հայաստանի պարապմունքի և կառավարության դեկավարները, մամուլի և կինոյի աշխատողները, դելեգատների հարազատներն ու մտերիմ ընկերները։

Ցերեկվա ժամը 4-ին, Պետական Հիմնի հնչյունների տակ, գնացքը մտավ Երևանի կայարանը։ Կայարանում բարձրացավ ուրախ իրարանցում և ամեն մեկը կամենում էր առաջինը տեսնել դելեգացիայի անդամներին։ Վագոնի դռան մոտ երևա-

[1] «Մարտիկ», 12 նոյեմբերի, 1943, № 83։

ցին դելեգացիայի անդամները, դիմավորողները, գրկաբաց ընդունելով, հանձնեցին ծաղկեփնջեր։

Հայկական դիվիզիայի դելեգացիան ջերմ հանդիպումներ ունեցավ ռեսպուբլիկայի քաղաքների մի շարք հիմնարկ-ձեռնարկների բանվորների ու ծառայողների հետ։ Նրանք Հայաստանի աշխատավորությանը պատմում էին զորամասի ձեռք բերած մարտական հաջողություններին, Թաման թերակղզին գերմանական զավթիչներից ազատագրելու համար մղված մարտերում դիվիզիայի անձնակազմի սխրագործությունների և հայ ժողովրդի նամակում առաջադրված պատգամները սրբությամբ կատարելու մասին։ Նրանք դիվիզիայի ամբողջ անձնակազմի անունից հավատիացնում էին հայ ժողովրդին, որ բոլոր ջանքերը գործ կդնեն, որպեսզի բազմապատկեն այդ հաջողությունները և տուն վերադառնան միայն լիակատար հաղթանակից հետո։

Ջերմ ու հուզիչ մթնոլորտում անցան հանդիպումները Երևանի կարմելի, մակարոնի գործարաններում, Արմֆանի կոլեկտիվի, Լենինականի շոգեքարշային դեպոյի, տեքստիլ կոմբինատի և տրիկոտաժ գործարանի կոլեկտիվների հետ։

Առանձնապես հուզիչ էր հանդիպումը սովետական գրողների և արվեստի աշխատողների հետ։ Դելեգացիայի ներկայացուցչի դիվիզիայի մարտական գործողությունների մասին այդտեղ տրված հակիրճ հաղորդման մեջ Ջահանի մասին ասված է հետևյալը. «Ընկ. Ջահան Կարախանյանի հերոսական գործերի մասին հիմա խոսում են ամբողջ ռազմաճակատում, նրանով պարծենում է մեր դիվիզիան։ Հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած արիության համար ընկ. Կարախանյանը ներկայացված է կառավարական բարձր պարգևի»[1]։

Հանդիպումները հրճվալից ծափահարություններով են դիմավորում հերոս սակրավոր Կարախանյանին, որը ելույթում պատմում է իր և իր անվեհեր ընկերների քաջագործությունների մասին և իր խոսքը վերջացնում այսպես. «Հայ ժողովուրդը կարող է միանգամայն վստահ լինել, որ մենք կջախ-

---

1 «Սովետական Հայաստան», 12 նոյեմբերի, 1943, № 231։

ջախենք թշնամուն և մեր հարազատների գերկը կվերադառնանք միայն փառքով ու հաղթանակով»[1]։

Հանդիպումից հետո նրան շրջապատեցին գրողները, արվեստագետները. նրա ուսին իր դողդոջուն ձեռքը դնելով, գիտության վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանն ասաց.

Ապրես դավակս, ոչ միայն զենքի հերոս ես, այլև խոսքի։

Ջերմ էր դելեգացիայի հանդիպումը Երևան քաղաքի երիտասարդության հետ, որտեղ ծափերի որոտի տակ հանդիսականները խնդրում էին, որ Ջահանը ինքը պատմի իր սխրագործությունների մասին։ Երբ նա սկսեց պատմել, բոլորը լարված ուշադրությամբ լսում էին նրան։ Նա սովորականի նման, իրեն մասին ոչինչ չասաց, և երբ նա ավարտեց իր խոսքը, դահլիճում նորից լսվեցին բացագանչություններ՝ ձեր մասին պատմեք, ձեր մասին ենք ուզում լսել։

Իմ մասին, ինչ ասեմ,դեռ ես էլ եմ մտածում կամուրջի ականատերծմանը, —ասաց նա և հանդիսատեսից իր տեղը։

Դելեգացիան հանդիպումներ ունեցավ նաև Կոտայքի, Էջմիածնի, Արտաշատի, Աշտարակի, Ալավերդու, Ախուրյանի շրջանների կոլտնտեսականների, շրջկենտրոնների բանվոր-ծառայողների և ինտելիգենցիայի հետ։

Սրտառուչ էր Ջահանի հանդիպումը իր ծնողների և հարազատների հետ։

Նոյեմբերի 15-ին, կեսօրին, լսելով Ջահանի գալու մասին, Կողբ գյուղի կոլտնտեսականները, պրոցականները, Ջահանի ընկերներն ու հարազատները գյուղից դուրս էին եկել իրենց սիրելի հերոսին դիմավորելու։

Եվ ահա գյուղի եզրին նրանք հանդիպում են միմյանց։ Բոլորը ջերմորեն ողջագուրվում են։ Հուզիչ էր Ջահանի դրվատանությունն իր հարազատների, առանձնապես՝ մոր հետ, որն ուրախության արցունքներն աչքերին ասում էր,—Երանի այն օրը, որդի ջան, երբ բոլորի որդիներն էլ քեզ նման կդան և բոլորի ծնողներն էլ ինձ նման կուրախանան։

Երիտասարդությունը ուղղակի թևերի վրա նրան հասցրեց

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ՀՊԳ-ի արխիվ, ֆ. 93։

գյուղի հրապարակը, որտեղ անմիջապես սկսվեց թուրքիկ միտինգը։

ՀԿՊ կենտկոմի ներկայացուցիչը կոլտնտեսականներին մանրամասն ծանոթացրեց Ջահանի կատարած քաջագործություններին։ Ելույթ ունեցավ նաև ինքը՝ Ջահանը։ Նա խոսում էր շատ հուզված, պատմում էր դիվիզիայի անցած հերոսական ուղու, իր զոհված ու կենդանի մնացած մարտական ընկերների կատարած քաջագործությունների, հայ ժողովրդի նակաղը պատվով կատարելու մասին։ Վերջում նա երդվեց իր համագյուղացիներին՝ մինչև արյան վերջին կաթիլը պայքարել հանուն հայրենիքի ազատության ու անկախության։

Հանդիպումներին մասնակցող աշխատավորները մեծ հրճվանքով խոսում էին հայ ժողովրդի հերոս զավակների մասին, որոնք արդարացրել էին հայ ժողովրդի պատգամները։ Իրենց հերթին հայ աշխատավորները խոստանում էին էլ ավելի ուժեղացնել ռազմաճակատին ու հարազատ Սովետական Բանակին ցույց տրվող օգնությունը և էլ ավելի եռանդով լծվել թիկունքում իրենց պարտականությունների կատարմանը։

Ի պատիվ N դիվիզիայի գնդացիրների, նոյեմբերի 20-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետում կազմակերպվում է ընդունելություն, որին ներկա էին Հայաստանի Կոմունիստական պարտիայի և կառավարության ղեկավարները։

Վերջում հրապարակվում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը դիվիզիայի ներկայացուցիչներին թանկարժեք նվերներով պարգևատրելու մասին։ Պարգևատրվածների թվում էր նաև Ջահան Կարախանյանը, որը շնորհակալություն հայտնելով ասաց. «Այն մարտական գրոշը, որ Դուք ռազմաճակատ մեկնելիս, հայ ժողովրդի անունից, հանձնեցիք մեզ, մենք այն կրակի ու բոցերի միջով, պատվով առաջ ենք տարել և կտանենք նաև առաջիկայում ու կծծենք այն հաղթանակների փառքով»։

Ոգեշնչված թիկունքի հերոսական աշխատանքով, նոր պարտականություններ ստանձնած, դիվիզիայի գնդացրային նոյեմբերի 23-ին Հայաստանից վերադարձավ ռազմաճակատ։ Ճանապարհին Ջահանը երազում էր հաղթանակի, հաղթանակով վերադառնալու մասին։ «Մի քանի օր հետո, երբ վերադառ-

նում էինք ռազմաճակատ,—գրում է իր հուշերում դելեգացիայի անդամ բանաստեղծ Արշալույս Մարոյանը,—գնացքում Ջահանը դառնալով ինձ, ասաց. «Դեռ ինչքան մեծ պարտականություն ունենք կատարելու մեր ժողովրդի հանդեպ»։ Այս անդամ քչախոսը սկսեց երկար խոսել. նա ծրագրում էր երկրորդ վերապարձի մասին։ «Մեկել Հայաստան կվերադառնաք, ասաց նա, հայացքը հառելով գնացքի լուսամուտից դուրս,—երբ գրավենք Բեռլինը, այ, այն ժամանակ կլինի իսկական վերադարձ»[1]։

1943 թվականի դեկտեմբեր ամսին էր, Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատի զորամասերի առջև խնդիր է դրվում դեռանոով իջնել Կերչի թերակղզին և այն ազատագրել թշնամուց։ Դիվիզիայի զորամասերը մասնակցում են այդ օպերացիային։ Երկարատև հրետանային նախապատրաստությունից հետո հետևակային ստորաբաժանումները անցան հարձակման, նպատակ ունենալով ճեղքել հակառակորդի պաշտպանության գիծը Բուլգանակայից հարավ-արևելք գտնվող երկու բլուրների ուղղությամբ, այնուհետև զարգացնել հարձակումը Կաֆերլեզի ջրանցքի, Միհրդատի բարձունքի ուղղությամբ։

Հարձակվող զորքերի առջևից գնում էին քաջարի սակրավորները, առանց իրենց հրամանատարի, բայց նրա օրինակով, որոնք գործում էին գլխավորապես մուտք գիշերով։ Առաջադրանք էին ստացել ոչնչացնել հակառակորդի պատրաստած արգելքները և հնարավորություն տալ մեր զորքերին առաջ շարժվելու։ Սև ծովից փչում էր հարավային ձյունախառն քամին, ցեխը հասնում էր մինչև մարդու ծնկները, անհնարին էր շարժվել և կողմնորոշվել։ բայց սակրավորները, արհամարհելով բոլոր դժվարությունները, պայքարելով մահվան դեմ, քայլ առ քայլ առաջ շարժվելով, մոտեցան ֆաշիստների պատրաստած փշալարերի խիտ ցանցին, անմիջական ձեռնամուխ եղան մարտական առաջադրանքների կատարմանը։

Երբ թիկունքից վերադարձող դելեգացիան 1943 թվականի դեկտեմբերի 3-ին հասավ Թաման, դիվիզիան արդեն անցել էր Կերչի թերակղզին և մարտեր էր մղում Կերչ քաղաքի համար։ Դելեգացիայի անդամները հանդիպումներ ունեցան դիվիզիայի

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 93, գ. 3, թ. 13։

զորամասերի հետ։ Այդ հանդիպումներին նրանք պատմում էին հայ աշխատավորության հետ իրենց ունեցած հանդիպումների, Խիկունդում ձեռք բերած հաջողությունների և հայ ժողովրդին տված խոստումների մասին։

Մարտի ընթացքում, հաղթահարելով բոլոր դժվարությունները, դիվիզիայի զորամասերը զգալի կերպով բարելավել էին իրենց դիրքերը։ Հետևակային ստորաբաժանումներն, անցնելով ակտիվ պաշտպանության, հաճախակի կազմակերպում էին հետախուզություններ հակառակորդի թուլ օղակները հայտնաբերելու համար։

Ակտիվ գործում էին սակրավորները, որոնք ճարպիկ մանևրներով ականապատում և փշալարերով ցանցապատում էին թշնամու նահանջի ուղիները և միաժամանակ քարուքանդ էին անում թշնամու առաջավոր գծի արգելքները։ Ջահանը, հավատարիմ մնալով իր ժողովրդին տված երդմանը, նորից մտնելով մարտերի մեջ, ոտքի է հանում իր ջոկի մարտիկներին, կատարելու նորանոր սխրագործություններ հանուն Հայրենիքի, հանուն հաղթանակի։

Դեկտեմբերի կեսերին հակառակորդն սկսում է անընդհատ կրակ բացել մեր պաշտպանության բնագծերի վրա՝ նպատակ ունենալով ճնշել մեր կրակակետերը և խափանել հրետանային ու ականանետային մարտկոցների գործողությունները։ Գործողության մեջ են մտնում մեր հրանոթները։ Սկսվում են կատաղի մարտեր։ Մարտերի ընթացքում սովետական հրետանին դիպուկ հարվածներով ոչնչացնում է թշնամու կրակակետերը և ամրությունները, բայց շուտով ֆաշիստները վերսկսում են իրենց հրետանային անկանոն կրակը։ Թշնամին ոչ մի կերպ չէր ցանկանում հեռանալ իր գրաված դիրքերից, իսկ մեր մարտիկներն էլ, չխնայելով իրենց իսկ կյանքը, կռվում էին ամեն մի թիզ հողի համար և ստիպում թշնամուն զուրս գալու իր դիրքերից։

1943 թվականի դեկտեմբերի 18-ին սակրավոր գումարտակը առաջադրանք է ստանում՝ ձեռք բերած նոր բնագծերի շրջանում դիվիզիայի հրամանատարի համար կառուցել նոր գիտակետ։ Թշնամին անընդհատ կրակի տակ էր պահում տեղանքը. սակրավորները աշխատեցին ողջ գիշերը։ Ջահանը ջանում էր բոլորովին առաջ ավարտել առաջադրանքը, բայց լուսաբացին, դեռ

առաջարկները չավարտած, հակառակորդի ականներից մեկը պայթում է գիտակցման մութքի առջև. Ջահանը մահացու վիրավորվում է։ Ընկերները գրկած իրենց մարտական ընկերոջը դուրս են բերում կրակի տակից և շտապ հասցնում բժշկասանիտարական դումարտակը։ Բժշկական անձնակազմը ոչինչ չի խնայում խեղճ հայրենասերի կյանքը փրկելու համար։ Դումարտակում պարզվում է, որ Ջահանը ստացել է բազմաթիվ բեկորային մեծ և փոքր վերքեր։ Բեկորներից մեկը ջարդել էր նրա ձախ թևի արմունկային հոդը և ոսկորը, մյուս բեկորը ջարդել էր ձախակողմյան կոնքի ոսկորը, թափանցել էր միանների մեջ, որի հետևանքով Ջահանը ստացել էր արյան վարակում։ Բժշկական անձնակազմը գործադրեց բոլոր հնարավոր միջոցառումները հերոսի կյանքը փրկելու համար։ Հետացվեց նույնիսկ Ջահանի ձախ թևը։ Ամբողջ մարմինը վիրակապերով փաթաթված, նրան տեղափոխում են գիվիզիայի դաշտային հոսպիտալը։ Ջահանը արիաբար տարավ այդ ծանր վիրահատությունը։

Այդ օրերին սակրավոր դումարտակի հրամանատարության և մերձավոր ընկերների ուշադրությունը հատած էր հոսպիտալի կողմը, ժամ առ ժամ հետաքրքրվում էին հերոսի առողջությամբ։ Ջահանը կարծես թե չէր էլ զգում իր մարմնի ցավը. նա այրվում էր բարձր տաքության մեջ, բայց գիտակցությունը չէր կորցրել, մաքառում էր մահվան դեմ, անդամ հոգեարքի մեջ նա պատասխանում էր իրեն այցելողների բոլոր հարցերին և ինքն էլ իր հերթին հետաքրքրվում առաջնագծի, զորամասի, իր ջոկատի հաջողություններով, իր ընկերների կյանքով։ Ապա խնդրում է իր ընկերներին, որ իր վերավորվելու մասին ոչինչ չգրեն ծնողներին, քանի որ նույն ունեն, որ կլավանա և ինքը կգրի։ Բայց քանի գնում նրա վիճակը ծանրանում էր։ Արյան վարակման հետ մեկտեղ սկսվել էր ուժեղ շնչահեղձություն։ Երկար մաքառելով մահվան դեմ, դեկտեմբերի 22-ի առավոտյան առհավետ դադարում է բաբախելուց Ջահանի հերոսական սիրտը։

Ջահանի մահվան լուրը արագությամբ տարածվեց զորամասում և այդ մեծ վիշտ պատճառեց նրա մարտական ընկերներին։ Կարախանյանի ընկերները մեծ փառքով նրան թաղեցին Ղրիմի Բաքսի գյուղի եղբայրական գերեզմանոցում, որտեղ

այժմ կանգնեցված է մի բարձրադիր հուշարձան Բաքսի գյուղում զոհված 18 հերոսների հիշատակին, որոնցից մեկն է Սովետական Միությունի Հերոս կարմիրբանակային Զահան Կարախանյանը։

Զահանի ընկերները, հողին հանձնելով իրենց սիրելի ընկերոջը, նրա թարմ շիրիմի առաջ ծնկաչոք երդվեցին՝ վրեժ լուծել թշնամուց և նրա ծնողներին գրեցին հետևյալ նամակը.

«Թանկագին բարեկամներ.

Ձեր որդին, մեր մարտական ընկեր Զահան Կարախանյանը, զոհվեց Հայրենիքի հանդեպ իր սրբազան պարտքը կատարելու ժամանակ. նա որպես հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկը, միշտ բարձր էր պահում նրա ազատասեր վեհությունն ու պատիվը։

Մենք երդվում ենք մեր հիշողության մեջ միշտ վառ պահել մեր խիզախ ու մարտական ընկերոջ՝ Զահան Կարախանյանի անմահ հիշատակը, անողոք վրեժ լուծել կատաղած թշնամուց։

Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ, մեկի փոխարեն տասը՝ այս է մեր սրբազան խոսքը։

Ա՛ի խուժք մարտական ընկերներ»[1]։

Զահան Կարախանյանը մասնակցեց Կովկասի պաշտպանության ու ազատագրման համար մղված բոլոր մարտերին՝ Մալգոբեկից Կուբան, Նովորոսիյսկ—Թաման, նա մասնակցեց նաև Կերչի ազատագրման համար մղված մարտերին։

Համեստ, խիզախ, վառ հայրենասերը մեծ գործ կատարեց Հայրենական Մեծ պատերազմի դժվարին օրերին։ Կովկասի համար մղվող մարտերում Կարախանյանը մասնակցեց Նովորոսիյսկ քաղաքի երկաթուղային կամուրջը պայթյունից փրկելու և երեք այլ կամուրջների կասեցման և հակառակորդի մի շարք կամուրջները շարքից հանելու օպերացիաներին։ Բացի այդ, նա անձամբ անվնաս պարձրեց թշնամու կողմից գրված 900 ական և անձամբ 3000 ական գրեց թշնամու շարժման ճանապարհին, ոչնչացրեց հակառակորդի բազմաթիվ տանկեր, ավտոմեքենաներ և շատ հիտլերականներ, որի համար Զահանն ստացել էր «Գերազանց ատանոր»-ի կրծքանշան։

[1] «Կարմիր դինվոր», 12 հունվարի, 1944, № 6։

Գերմանական զավթիչների դեմ մղված պայքարում, հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելի՝ որպես կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով հետևանքով Սովետական Միության Հերոսի բարձր կոչում շնորհեց կոմբրիգադային Զոհան Սարգսի Կարախանյանին[1]։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թվականի սեպտեմբերի 2-ի հրամանագրով, Հայկական ՍՍՌ-ի շարք միջնակարգ դպրոցների, այդ թվում Ալավերդու շրջանի Կողբ գյուղի Ի. Վ. Ստալինի անվան միջնակարգ դպրոցին ևս, որպես սովորել և դաստիարակվել էր Սովետական Միության Հերոս Զոհան Կարախանյանը, պարգևատրեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով[2]։

Ընդառաջելով Կողբ գյուղի աշխատավորների ցանկությանը, հերոսի հիշատակը հավերժացնելու նպատակով, Անտանտական միության նախագահությունը իր 1946 թվականի հունվարի 10-ի որոշմամբ Կողբ գյուղում նոր կազմակերպվող վեցամյակային արտելը անվանեց Սովետական Միության Հերոս Զոհան Կարախանյանի անունով։

Կողբի Ի. Վ. Ստալինի անվան միջնակարգ դպրոցի դիրեկցիան Կարախանյանի աշակերտական սենյան-նստարանը առանձնացրել և թույլատրում է նրա վրա նստել միայն գերազանցիկ աշակերտներին։ Այդ սեղանի վրա կա հետևյալ մակագրությունը.

«Այս սեղանի վրա է սովորել ու դաստիարակվել Սովետական Միության Հերոս Զոհան Կարախանյանը»[3]։

Հրաձգային դիվիզիան, որն իր շարքերում դաստիարակեց հազարավոր խիզախներ, Սովետական Միության հերոսներ, որոնցից մեկն էր Զոհան Կարախանյանը, Հայրենական պատերազմի կատաղի մարտերի մեջ իր գրաքը պատեցեց փառքով՝ Կովկասի նախալեռներից հարձակումով հասավ մինչև Բեռլին, գրաված Կարմ-

---

[1] «Պրավդա», 17 մայիսի, 1944, № 118։

[2] «Սովետական Հայաստան», 3 սեպտեմբերի, 1944, № 176։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ՀՊԳԿ-ի արխիվ, ֆոնդ 93։

բարդուշ, Կարմիր ասպի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր։ Դիվիզիայի անձնակազմն, առանձնապես, սակրավոր գումարտակի սպաներն ու մարտիկները երբեք չեն մոռանում Ջահանին, նա իր հերոսական օրինակով նրանց հետ էր նաև Վետագայում՝ Ղրիմի, Լեհաստանի ազատագրման, Բեռլինի գրավման մարտերում։

Պատերազմի փոթորկոտ օրերին հաջորդեցին խաղաղ շինարարական տարիները։ Սակայն Ջահանի անթառամ հիշատակը իր մարտական ընկերների, իր հարազատների և ամբողջ սովետական ժողովրդի սրտում է, որոնց համար նա զոհաբերեց իր երիտասարդ կյանքը։

Պատ. խմբագիր՝ Ե. Խալեյան
Հրատ. խմբագիր՝ Հ. Էլչիբեկյան

Տեխ. խմբագիր՝ Մ. Կափլանյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. Շաղգամյան

ՎՖ 12460 ԽՀԽ 209 Հրատ. № 1080 Պատվեր 347 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 23/VII 1954 թ.։
Ստորագրված է տպագրության 28/IX 1954 թ.։
Թուղթ 60×92/16։ հրատ. 1,75 մամուլ։ տպագր. 2,5 մամուլ։ Գինը 60 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 124։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014247

ԳԻՆԸ ~~88~~ դ. 64։

11833